

ցած իրաւունքների պահանջողները:

Մինչդեռ ինչ. Կ. Պօլսի ազգային ժողովը բոլոր բեռը բարձած մի մարդի, պատրիարքի ուսերին, մնացել է հանգիստ յոյսով նորա տաղանդի և ֆուրնիէ ու Լայեարդի տրամադրութեան վրա, իսկ նոցա տրամադրութիւնը այնչափ փոփոխական է և անհաստատ, որչափ և նոցա դրութիւնը խախտու և ենթակայ պատահարներին: Եղգի գործը այս վիճակի մէջ թողած ազգային ժողովը ժամանակ է անցնում ապարդիւն վիճաբանութիւններով և դարդակ նիստերով, կարծես նորա աչքերը միանգամայն չեն տեսնում, ականջները չեն լսում որ Հայաստանի ներկան ու ապագան տատանվում է մի մազի կամուրջի վրա, որ քաշում է մի ծայրից բիւրդի սուրը և միւս ծայրից գաղթականութիւնը: Հայաստանը, ասում եմ, ունի Լուրպայի համար կարեւորութիւն, ուրեմն հարկաւոր չէ բնել, հարկաւոր է զարթնել քանի դեռ ուշ չէ....

Ուսումնի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՈՒՇՈՒՑ

19 փետրվ

Օրերումս Եւրոպ մէջ մի դէպք պատահեց, որ հարկաւոր եմ համարում հաղորդել ձեր լրագրին: Վարդանանց սուրբ տօնին մի հարսանիքում, ուր գրեթէ քաղաքիս պատուաւոր թէ կանայք և թէ մարդիկ ներկայ էին, ճաշի ժամանակ օրիորդաց հոգեւոր դպրոցի աշակերտուհի Հեղինէ Աղամբեանցը կարդաց մի ճառ և մի ոտանաւոր, (որ սեփական աշխատութեամբ), որոնց նիւթըն էր Հայաստանի մարդկայնութեան սուկալի ժամանակները, վարդանանց միաբանութիւնը, նահատակութիւնը եկեղեցու ազատութեան համար, այն ժամանակվայ կանանց վարքը, շերտնադրութիւնը թէ, ինչպէս էին պատերազմում վահան, և նիզակ ձեռքներին, թողած իրանց թանկագին դարդարանքը ու պահուստները, պատմեց նոյնպէս ուսման օգուտը և կարողութիւնը, բացարձեց «Արարատեան ընկերութեան» նպատակը և նորա ապագայ մեծ օգուտը: Վերջապէս օրիորդը խնդրում էր, որ մեր քաղաքացիք ևս օգնեն իրենց կարողութեան չափ «Արարատեան ընկերութեան» և Տարօնում բացվող ուսումնարանին, որը Մեծին վարդանանց ծննդեան երկիրն է, ասելով, որ կան այնպիսի դեռ ևս վարդանայ պէս շատ հայրենասէր զաւակներ, բայց ճնշված և չընթացող մոլեւանդ ու վայրենի ժողովուրդներով: Վերջացնելով ճառը, օրիորդը սկսեց իր ընկերուհիների հետ երգել մի քանի ազգային երգեր: Հասարակութիւնը կեցցէներով դատարկեց բաժակներ զանազան բարեմաղթութիւններով *) հայրենեաց համար: Մեծ. օրիորդին, որը եղաւ պատճառ մի այսպիսի ուրախ տեսարանի, պարտք եմ համարում իմ խորին շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել: Հիմայ կարող

*) Բարեմաղթութիւններ անելը և բաժակների դարդակելը շատ հինգ է. բայց ոչոք չը մտածեց նուէրներ հաւաքել:

Իմբ.

եմ համարձակ ասել, որ եթէ նոյն հոգով լինեն մեծանում և քաղաքիս միտցեալ հայ օրիորդները, կունենանք իր ժամանակին առատ հունձ. կըրկին շնորհակալութիւն սոյն և սրա նման հայրենասէր օրիորդներին:

Լսում ենք, որ այս մեծ պատին եկեղեցիներում քահանայքը պիտի քարոզ կարդան. կը ցանկանայինք, որ միւս տարվայ պէս չը խօսէին միակերպ առարկաների վրա, այլ մեր հասարակութեանը հասկացնէին գոնէ զխաւոր տօների նշանակութիւնը, պատմէին ազգային յառաջադիմութեան շարժառիթները վրա, իսկ թէ ոչ, ինչպէս պահանջներ հունձ առանց ցանկելու: Օրինակի համար պատմեմ մի կարճ անցք, որին ես ակնառատ եմ և ըստ այնմ դիւք, պատուելի ընթերցողք, դատեցէք մեր հասարակ ժողովուրդի դարգացումը: Տեսաւ ընդառաջ օրը մի դերձակ հարցնում է իր ընկերից թէ ինչու են այսօր Սիմէոն ծերունու օր անուանում, իսկ ընկերը, որ աւելի դարգացած է համարվում, պատասխանում է երբ Սիմէոն ծերունին Աստուածաշունչը գրում էր և ֆրիստոսի անունը գրելու ժամանակը տառերը ոսկի էին գրվում, այս պատճառով այսօր այդպէս են անուանում: Հիմայ դուք ճշմարիտը ասացէք, ո՞վ է մեղաւոր, մեր արժ. քահանաները, թէ ժողովուրդը:

Եւսլին բոլորին յայտնի է իր ձախ կողմերով, նա միշտ այն է ընդունում, որին բոլոր աշխարհը հակառակ է: Վերջապէս և Եւսլինում մօղա ընկաւ բաժինքը, բայց ոչ թէ աղկայ վրա են բաժինք տալիս, այլ տղայիցն են բաժինք ուղում և յետոյ աղկի տալիս, որովհետեւ աղկերը մեր քաղաքում սակաւաթիւ են: Այս բարեկենդանի մի նոր հարստացած երիտասարդ մի պատուաւոր տան աղկայ համար առաջարկութիւն է տնում, բայց երբ նրա խնդրը մերժում են, նա սկսում է միջնորդներ ձգել և նորից խնդրել: Վերջապէս երիտասարդի առաջարկութիւնը ընդունում են միայն այն պայմանով, որ 12 հազար ռուբլ աղկայ անձամբ ձգէ բանկը. երիտասարդը ուրախութեամբ կատարում է նրանց ցանկութիւնը և յետոյ օրիորդի հետ պըսակվում: Ինչպէս ասում են, այդ օրինակին հետեւել են և մի քանիսն: Իսկ այրիների հետ պսակվողները իրանք անձամբ գնում են պսակվող կնոջ մօտ և ինչպէս տօրգ սկսում են փող աւելացնել և ով փող չառ է տալիս նրա հետ կինը պսակվում է: Այդպէս էլ մեր քաղաքում մեծ գեր չէ խաղում տղայի արժանաւորութիւնը, ուսումը, կամ լաւ ընտանիքից լինելը, միայն թէ փող չառ ունենայ և ում հետ կամենայ կալուրդ է պսակվել: Խորհուրդ կը տայինք շատ աղկերը ունեցող թիֆլիսցիներին, մի քանի ժամանակ զարթնել Եւսլին և հաւատացնում ենք որ այդ ապրանքը լաւ գնով կը ծախվի:

Եւսլին

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

24 փետրվարի

Փետրվարի 18-ին, կիրակի օրը հանդիսաւոր Կերպով կատարվեցաւ Ղարսի հայոց ուսումնարանի դրադարանի բացումը: Գրադարանի մէջ խուռն բազմութեամբ լցված էին ժողովուրդը և հոգևորականութիւնը: Աշակերտները երգեցին ազգային երգեր, ուսուցիչ պ. Յակոբեանց և կարենցի պ. Յակոբ Մամիկոնեան զեղեցիկ և ազդու առեմնաբանութիւններ արին: Հայր առաջնորդը յայտնեց ժողովրդեան դրադարանի նպատակը և պայմանները: Պ. Նշան Բլէխմանանց պատմեց ընթերցարանի կազմվելու համառու եղելութիւնը և կարդաց նուիրատուների ցուցակը և հանդէսը վերջացաւ պ. Տէր-Սարգսեանի երգած աղօթքով, որից յետոյ գրվեցան բաւականին բաժանորդներ:

Ամսին 23-ին Ղարսի արժանաւայել առաջնորդ հայր Աղուստեան անկեցաւ դէպի Էլմիթիւնի ներկայանալու Նորին վհախաւորութեան, որին դեռ մինչև այժմ չէր կարող ներկայանալ ազգային գործերով ծանրաբեռնած լինելով, որոնց շարունակութեան խաթմանաթիթ էր եղած պատերազմի խառնակ դրութիւնը: Ասում են որ Նորին վհախաւորութիւնը, տեսնելով հայր Աղուստեանի արիւնքան գործունէութիւնը և ժողովրդապիտրութիւնը բարեհաճել է վարձատրել նրան, շուտ օրով բարձրացնելով նրան եպիսկոպոսութեան աստիճանին, որին արդարեւ արժանի

է և որին կը ցանկան բարձրացած տեսնել այդ պաշտօնի վրա Ղարսի բոլոր բնակիչները և նոյն իսկ տաճիկներն անգամ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Յիֆլիս, 26 փետրվարի

Ձեր յարգելի լրագրի ամսին 22-ի համար 25 առաջին երեսումը ապագրած է իշխան Էրիստօյի նամակը: Այդ նամակումը իշխան Էրիստօյը բացատրելով թէ նա շատ անգամ ներկայացնելով տեղիս առեւտրական բանկին հատման համար մեծ գումարներ ժողովուրդի, և գերազանցելով իր ժամանակակիցին ճիշդ հատուցմունքով, երբէք չէ ստացել բացասութիւն իր ներկայացրած մուրհակի հատմանը: Սակայն այս օրերումս ևս ստացել է բացասութիւն հատման համար ներկայացրած մուրհակի:

Այդպիսի երկբայութիւն դէպքի տարին պայծառափայլութիւնը ցոյց է տուել բանկը, ինչպէս տեղեկացել է նա, խորհրդարանի անդամների մէկից, այն պատճառաւ, որ խորհրդարանի միւս անդամ, Ն. Ա. Կավիթովը, յայտնել է խորհրդարանին իշխան Էրիստօյի անձնիքը գտնվելու մասին պարտքի հատուցման մէջ, հիմնվելով այն փաստի վրա, որ նա, իշխան Էրիստօյը, պարտական լինելով նրան մուրհակագրով, ոչ միայն աւելի է տուել հասցնելու մուրհակը պրօստիտի, այլ և մինչև այսօր էլ չէ վճարել իր պարտքը:

Պ. Կավիթովի այդպիսի անաղին գործողութիւնը, ինչպէս երևում է, չարժեք է իշխան Էրիստօյի աղին տրամադրութիւնը: Ըստ աստիճանի էրիստօյի, պ. Կավիթովը փոխ տալով իր փողերը առնում է 30 տոկոսից բոլորով վրա, և այդպիսի տոկոսիք նա աւել է նորին պայծառափայլութիւնիցն էլ, և այդ պատճառաւ իշխան Էրիստօյը հարկաւոր է համարում Կավիթովի գործողութեանց մասին տեղեկութիւն տալ պատշաճաւ տեղը, և մինչև անգամ, եթէ Կավիթովը կը կամենայ, հասցնել դատարանի դիտութեանը:

Այս նամակը հակադրվեցուցիչ ներդրութիւն արեց մեզ վրա: Իշխան Էրիստօյը կամենալով հասարակութեան դատողութեան առաջ նուազեցնել Կավիթովի անձնական արժանաւորութիւնը և բարձրացնել իր աղին յատկութիւնը, որոնք որպէս թէ վշտացած են առեւտրական բանկի խորհրդարանի գործողութեանմբը, ինքը առանց նկատելու վարվել է բոլորովին հակադիր կերպով, այսինքն նա ապացուցել է Կավիթովի շիտակութիւնը (честность) և առեւտրական բանկի հանձնարել գործողութիւնը:

Յայտնի է, որ առեւտրական բանկի խորհրդարանում դատողութիւնը և խորհրդակցութիւնը կատարվում են այնքան ծածկաբար, մինչև որ նոյն իսկ միւս ծառայողքը բանկի մէջ չեն կարողանում թափանցել այդ գաղտնիքը, այն էլ յայտնի է, որ խորհրդարանի անդամները իրաւունք չունեն գուրս հանել խորհրդարանում արտայայտած դատողութիւնը կրելով խնդրողների բարեյոյս կամ անբարեյոյս լինելու մասին, վասն որոյ մենք խնդրեցինք մեղանից աւելի տեղեկ անձներից հասկացնել մեզ, թէ կարելի է արդե՞ք, որ իշխան Էրիստօյի համար բացառութիւն լինի արած ընդհանուր կանոնից, և թէ կարելի է արդե՞ք, որ խորհրդարանի անդամը արտայայտած լինի նրան խորհրդարանի գաղտնիքը: Մենք հետաքրքրվում էինք այդ խնդրով այն պատճառաւ, որ ինքներս շատ անգամ եղել ենք իշխան Էրիստօյի վիճակում, և երբէք մեր աշխատութիւնը մեր վիճակին հատման բացասութեան պատճառը խմաւոր չէ պսակվել յաղորդութեամբ, և մենք պատասխան ենք ստացել աւելի հեզմակաւ, քան թէ էական բովանդակութեամբ: Օրինակ մեզ առաջարկում էին յիշել նշանաւոր առածը, որ ասել է պ. Պալմերին մէկ ժողովումը (զոգի դո ա կ ե վ ա ո վ ու մ է): Այս առածով երեւի, նրանք կամենում էին մեզ հասկացնել, թէ մենք ինքներս պիտի հասկանալ մեր վիճակի հատման բացասութեան պատճառը, ըստ որում մեզ աւելի պիտի յայտնի լինի, թէ բանկի անդամներից որին աւելի յայտնի են մեր դրամական հանգամանքները միմի կողմերը: Սակայն այս առածը չէ կարելի յարմարեցնել ներկայ գիպուածին, ըստ որում իշխան Էրիստօյը ճշ թէ հիմնվելով կարծիքական ենթադրութեան վրա է ցոյց տալի Կավիթովի վրա, որին յայտնի են նրա դրամական հանգամանքը, այլ ուղղակի

ասում է, թէ լսել է խորհրդարանի անդամների մէկից. ուրեմն գործի այդ կողմը մնում է ասական մութ: Բայց բանի էութիւնը այն չէ, թէ ունէր արդե՞ք իրաւունք խորհրդարանի անդամը հաղորդել իշխան Էրիստօյին խորհրդարանում խօսածները և թէ յիշելով կատարուել է արդե՞ք այդ փաստը, այլ այն է, որ եթէ վեբսելի հատման բացասութեան պատճառը միայն Կավիթովն էր, ունէր արդե՞ք իրաւունք նա, Կավիթովը, ի բր և ան դ ա մ խ ո ռ Գ ռ ա ռ ի, թողնել ու լուռ մնալ իրան յայտնի հանգամանքի մասին այն անձի պարտքի հատուցման անհղիթեան վերաբերութեամբ: որ խնդրում է վեբսելի հատուցում, զանազանութիւն չը կայ, թէ ում առաջն է անձնիք գտնվել: Յայտնի է, որ բանկերում, վեբսելները հատման ընդունելուց առաջ, դատողութիւն են անում վեբսել տուողների կամ բլանկ մակագրողների բարեյոյս լինելու մասին: Այն էլ յայտնի է, որ իբրեւ կանոն ընդունված է ընդհանրապէս անբարեյոյս համարել այն անձանց, որոնք իրանց վեբսելները հասցրել են պրօստիտի, զանազանութիւն չը կայ, թէ ում ձեռքում են եղել այդ վեբսելները: Այս հիմանց վրա, մենք եղբակացնում ենք, որ Կավիթովը, ի բր և ան դ ա մ խ ո ռ Գ ռ ա ռ ի իրաւունք չունէր չը յայտնել խորհրդարանին, թէ իշխան Էրիստօյը ճշ միայն հասցրել է իր մուրհակագրերը մինչև պրօստիտի, այլ և պարտքն էլ չէ վճարել: Այնպէս վարվելով, ակներեւ է, որ Կավիթովը յիտակ կատարել է իր պարտաւորութիւնը հասարակութեան առաջը: Ընդհակառակն եթէ Կավիթովը թագարած լինէր այդ հանգամանքը, կարող էր ենթակվել այն կասկածներին, թէ գիտութեամբ ծածկում է պակասութիւնը կրեղիտ խնդրողի բանկում: և միջոց է տալի նրա համար կրեղիտ բանալու այն նպատակաւ, որ բանկից դուրս բերած փողերից ստանայ իրան պարտքը:

Մենք պատկանում ենք մեր բանկի կառավարչաց դէմ հակառակողների կարգին և մէկ ժամանակ մենք համարեա թէ համոզված էինք, թէ նրանք յօժարութեամբ և մինչև անգամ իրանց պարտաւորներից ցանկութեան հակառակ բաց են ասում նրանց համար կրեղիտ բանկերում և այդպիսով տալիս են նրանց միջոց բանկերից դուրս բերած փողերով վճարել նրանց պարտքերը: Բայց ներկայ դիպուածը փարատեց մեր կասկածը ու մենք բաւականութեամբ տեսնում ենք, որ Կավիթովի անձի մէջ, ներանց գործողութեան անբովութիւնը հասարակութեան գործումը:

Իսկ ինչ վերաբերում է իշխան Էրիստօյի նամակի այն տեղին, ուր նա ասում է, թէ Կավիթովը առնում է 30% և թէ այդպիսի տոկոսիք հատուցել է նրան ինքը, նորին պայծառափայլութիւնը, — այդ տեղը աւելի ապացուցանում է իշխան Էրիստօյի հակախօսութիւնը, քան թէ Կավիթովի պակասութիւնը: Նամակի սկզբումը իշխան Էրիստօյը հաւատացնում է, թէ ունէր բանկում մտերմութիւն և մեծ գումարի կրեղիտ, մենք իրաւունք չունենք չը հաւատալու նորին պայծառափայլութեան խօսքերին, սակայն մեզ համար անհասկանալի է մնում, թէ ինչը կարողացաւ հարկադրել նրան զիմե Կավիթովի հովանաւորութեանը և նրանից փող առնել 30 տոկոսիցով, այլ չը դիմել բանկին ուր առնում են միայն 5—8 տոկոսիք:

Իշխան Էրիստօյը չէ հերքում, այլ խոստովանում է, թէ պարտական է Կավիթովին 600 ռուբլ և թէ առաջարկում է նրան պահանջել իրանից դատարանի միջնորդութեամբ: Չը խօսելով արդէն այն մասին, որ դէպքի դատարան ուղղելը ցոյց է տալի պարտաւորի անհղիթեութիւնը դէպքի պարտաւորը, այնու ամենայնիւ անկասկած է, որ պահանջ բացելը դատարաններում և վախճանին հասցնելը մեծ դժուարութիւններ, ժամանակի կորուստ և անպտուղ ծախսեր ունեն, որոնք վաճառական ու ընդհանրապէս գործունեայ մարդոց համար մեծ հաշիւ և մեծ նշանակութիւն ունեն: Մենք չը գիտենք թէ իսկապէս որքան տոկոսիք է ստացել Կավիթովը, սակայն եթէ նա այնպիսի պարտաւորներից, որոնք նրան դատարանի ճանապարհ են ցոյց տալի, 40 տոկոսիք ստանայ, այն ժամանակն էլ հաշվելով կորուստները, որ յառաջ են գալի իր ժամանակին չը վճարելուց, իր դեպքումեղից յետ ընկնելը, գործը առաջ տանելու ծախսերը և այն հաղու թէ կը մնայ 50%:

Վերջապէս մենք կունենայինք տակաւին էլի որպիսի և իցէ հիմնաւորութիւն անգոռնելու Կավիթովին 30 տոկոսիք առնելու համար, եթէ

իշխան էր իստովը լինէր այնպիսի մարդու վրէժակում, որ կարող է հովանաւորութեան կամ հոգատարութեան, իսկ եթէ նա կատարեալ ընդունակութիւն և անձնական իրաւունք ունի և ըստ այնմ իր ազատ կամքովը պարտաւորութիւն է կապել իստովի հետ, ապա ուրեմն նրա պարտաւորութիւնը այդ պարտաւորութեան խտուրտեան մասին ներկայանում է բոլորովին անտեղի:

«Մշակ» լրագրի վերոյիշեալ թուահամարը մէկ քանի անձինք կարողութիւն մէկ հրապարակական տեղումը և չէին կարողանում զսպել իրանց ծիծաղը: Պատահաւոր վաճառականներից մէկը Գ. Ա., լրագրի կարգաւորը յետոյ բարձրաձայն ասաց. «Հմիսն է Գովորովին... ընչի համար է նա գործ բռնում աստիճանաւորների հետ, էն էլ էնպիսիների հետ, որոնք գիտեն լրագրի ներսում գրել և սպառնալիքներով վախեցնել: Իմ կոյր բաղդիցս այդ պատահեցաւ այն ժամանակը, երբ որ ես կամենում էի նրանցից մէկից փող խնդրել վեճելով առած պարտքս վճարելու և գրաւ թափելու համար, բայց աստիճանաւորների մասին այդպիսի խօսքերը լսելուց յետոյ յայտնի բան է, որ չը վստահացայ փող խնդրել, որի համար և միւս օրը իմ վեճելը ներկայացաւ պրօտեստի և ես չը կարողացայ թափել իմ գրաւը, որից զրկվեցայ իշխան էր իստովի նա-մակի շնորհիւ:

Աստիճանաւոր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 28 փետրվարի

Ուղարկելով ձեզ ներկայեալ նամակաւ քը-սան րուբլ, խնդրեմ հասցնէք յօգուտ «Արա-րատեան ընկերութեան» այդ փողը և մի և նոյն ժամանակ յայտնեցէ՛ք որ ես պարտաւորվում եմ նոյն գումարը վճարել իւրաքանչիւր տարի: Բ. Յ. Ղալաճարեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈՂԳԱՐԻՒ

Այս վերջին ժամանակներս, լրագրիները առհասարակ շատ քիչ են զբաղվում բոլորական հարցով, այնպէս որ ազգային այն ժողովի մասին, որ վերջին անգամ գումար-վեցաւ Տընսօվայում, ոչինչ բաւականացուցիչ և կատարեալ անդեկութիւն չունենք: Միայն «Indép. Belge» լրագիրը ասում է, որ այդ օրը ազգային ժողովը բացվեցաւ պ. իշխան Գոնզուկով—Կորսակովի ճառով, և մի և նոյն օրվայ երկուցեան ժողովի անդամները մի փա-ռաւոր խնջոյք տուին, որի մէջ բազմաթիւ քաղաքական օտար և առաջարկվեցան, և մի քանի ծառեր կարգադրվեցան, որոնց միջից ամենամեծ նշանակութիւնը տալիս են բրի-տանական զինուոր գործակատարի ասած ծառին, որի մէջ պատուելի պարոնը ակնար-կութիւն է անում թէ ապագայում Բուլգարիան էլ կը միանայ Բոլգարիայի հետ: Ծառի կար-գալու ժամանակ շարունակ եռանդուն ծա-փահարութիւններ էին լսվում: Ծառը վեր-ջացնելուց յետոյ, ամեն կողմից բրիտանական զործակատարին ուրախութեան օտոտեր ա-ռաջարկվեցան:

Բոլգարական ժողովը, իշխանի ընտրութե-նից առաջ, դեռ մտադիր է զբաղվել մի քանի զինուոր և կենսական հարցերի մա-սին: Բերլինի դաշնագրի համաձայն բոլոր եւրոպական պետութիւնները մի մի ներկա-յացուցիչներ պէտք է ունենան ազգային ժո-ղովի գործերի վրա հսկողութիւն գործելու: Այդ ներկայացուցիչներից ամենամեծ իրա-ւունքը ունի Թիւրքիայի ներկայացուցիչը, բայց բոլգարական ժողովի կարծիքը շատ վատ է երաշխաւոր լինում նրա ազդեցու-թեան մասին: Զարմանալի բան է, որ Թիւր-քիան մի ազգի սրտում այնքան ատելութեան սերմեր ցանկնուց յետոյ, կարճեալ յոյս ունի, որ այդ մի և նոյն ազգի մէջ ազդեցութիւն

ունենայ, և այն էլ բարոյական ազդեցու-թիւն... Զմարիտ է միայն որ արեւելեան ֆանտազիայով վառված երևակայութիւն պէտք է ունենայ մի ազգ, որ իր վրա այդ-քան մեծ վստահութիւն ունենայ: Եւրոպա-կան լրագիրները, մանաւանդ պ. Գամբէտայի օրգան «Republique Francaise» լրագիրը, սաստիկ նախանշում են ռուսաց ունեցած հաջողի ազդեցութեան վրա: «Голосъ» լրա-գիրը ներկայ տարվայ 31 համարում տպված մի յօդուածով, սաստիկ յարձարձակվում է վերոյիշեալ ֆրանսիական լրագրի դէմ: Նա իր յարձակումների մէջ ծայրայեղութիւնը մինչև այն տեղն է հասցնում, որ յայտա-շարայ Գամբէտայի օրգանին ազատութեան թշնամի է անուանում: Կարծիք չը կայ, որ «Голосъ» լրագրի այդ խօսքերը չափազանց ծայրայեղութեան են հասնում, որովհետեւ պ. Գամբէտա բոլոր իր հասարակական գոր-ծունեութեան մէջ պարզ ապացուցեց թէ որքան նա պաշտպան է ազատութեան. սա այնպիսի մի իրողութիւն է, որ նրա ամե-նաներդեալ թշնամիներն անգամ ամենախղճ-մասնքով կը խոստովանեն: Անշուշտ, այդ-պիսի մեծ նշանակութիւն տալ ռուսներին, բոլգարացոց կողմից, դա մի շատ զովելի գործ է, դա այնպիսի երախտագիտական ազ-նիւ գործ է, որ պատիւ է բերում ամբողջ Բոլգարիային: Այստեղ զարմանալու ոչինչ չը կայ. ռուսները նրանց ազատութիւն տուին, և նրանք վստահաբար ցոյց են տալի իրանց ազատարար բարեկամին իրանց երախտագի-տութեան խորին զգացմունքը: Ընդ որչափ կարողացանք հասկանալ «Republique Fran-caise» լրագրի խօսքերը, նա ոչ թէ ցանկա-նում է, որ Բոլգարիան Թիւրքիայի լծի տակ մնայ, այլ նա միայն ակնարկութիւն է անում Ռուսաստանի քաղաքականութեան մասին, որ իրը նա, ազատելով Բոլգարիան թիւրքաց լծի տակից, կամենում է նրանից մի ռուսական նահանգ կազմել: Ի՞նչու թէ Ֆրանսիական լրագրի ասածները ճշմարիտ լինեն: Ռուսաս-տանը վստահ կերպով ցոյց տուեց ամբողջ Եւ-րոպային այն սրբազան նպատակը, որի համար նա, բանալով երկզկիսայ արծուի դրօշակը, զոչեց իր այնքան քաջերի արիւնը: Փող ով ինչ ուզում է ասի, պատմութիւնը դափնեայ պսակ կը հիւսնէ բոլոր այն քաջերի համար, որոնք ընկան այնքան տարիներով ստրկութեան շղթաների մէջ տանջվող զրիս-տունեաների ազատութեան համար:

ԱՆՔԻՒ

Աֆգանիստանից եկած վերջին լուրերը հետզհետեւ խաղաղական են, թէև ճշմարիտը խոստովանած, այդ լուրերից և ոչ մէկին կարելի է հաստատ հաւատ ընծայել: Այն նամակին, որ Եակուբ-խանը ուղարկել էր ձեռնպահների փոխաբային, հազար ու մի թարգմանու-թիւն են տալի: Երբեմն ասում են թէ այդ նամակով, Եակուբ-խանը խնդրում է անգլիա-կան կառավարութեանը, որ հաշտութիւն կապել երկու թշնամի պետութիւնների մէջ, երբեմն էլ թէ նա (Եակուբ-խանը) պատրաստ է մինչև արեան վերջին կաթիլը պաշտպա-նել իր հայրենիքը և հօր գահը, և այլ սրա նման լուրեր: Միայն մի բան կարելի է վստահաբար ասել. այն է, որ այսուհետեւ ե-կած լուրերը աւելի և աւելի խաղաղական բնուրուութիւն ունեն:

Նիւ-Սիլի մահից յետոյ, Աֆգանիստանին առ ժամանակ տիրեց կատարեալ անար-խիա. յանկարծ հանդէս գլուսեց եկան այն անձինք, որոնք վաղուց հետեւ գիտաւորու-թիւն ունէին աֆգանական գահը ձեռք ձը-րելու: Այդ մարդկերանցից իւրաքանչեւը ունէր իր կուսակցութիւնը, հետեւաբար կը-ռիւը սկսվեց ոչ թէ միայն նրանց մէջ, ո-

րոնք կամենում էին գահին տիրել, այլ և դա սկսվեց և նոյն իսկ ամբողջ մէջ: Բայց Եա-կուբ-խանը իր բազմաթիւ կուսակցներով հա-լածեց բոլոր այդ ինքնակոչ թագաւորներին, և իր յաղթութիւնը կապեց Աֆգանիստանի թագի հետ:

Այժմ օտար պետութիւնները, ինչպէս և անգլիացիք, նրան են ձանաչում իբրեւ գահի իրաւացի ժառանգ և յաջորդ, հետեւաբար և բոլոր իրանց բանազնացութիւնները նրա հետ են անում:

ԻՏԱԼԻԱ

Կառավարութիւնը օրէնքի մի նոր ծրա-գիր է կազմել, որի հիման վրա պահանջվում է, որ եկեղեցական ամուսնութիւնից առաջ, պատկող զոյգերը իրանց մէջ նախ դեռ քա-ղաքական ամուսնութեան դաշն պէտք է կա-պեն, և յետոյ եկեղեցական ամուսնութիւն ընդունեն: Պէտք չէ աւելացնել, որ այս նոր օրէնքի ծրագիրը շատ լաւ տպաւորութիւն չը գործեց Վատիկանի վրա. բոլոր եպիսկո-պոսների մէջ մեծ դժգոհւն ընկաւ: Բոլոր եպիսկոպոսները հերթով—հերթով բողոք-ներ են տալի Հռոմէյան թագաւորին, խնդ-րելով, որ նա ոչնչացնէ այդ օրէնքի ծրագի-րը: Հռոմէյան թագաւորը, իբրեւ սահմանադ-րական միապետ, նրանց կատարեալ խօսք չը տուեց, բայց խոստացաւ, որ ձեռքից եկածը չի խնայի, որպէս զի պալատում այդ ծրա-գիրը չընդունվի: Ասում են որ հայրապետա-կան գանձարանի դատարկութիւնը ստիպել է պապին (Լեւոն XIII) բողոք բանալու կառավա-րութեան դէմ այն երեք միլիօն գումարի մասին, որ բոլոր վաւերականութեամբ պատ-կանում էր Սուրբ Աթոռին, և որ նախորդ թագաւորը, բողոքելին անարգարութեամբ արքունիքին է գրաւել, բացի այս նա հրա-մայել է բոլոր եպիսկոպոսներին որ նրանք սուրբ Պետրոսի դահլիճն անունով հանգա-նակութիւն անեն սուրբ գանձարանը լցնելու համար:

Վաղուց է որ Իտալիայի ներքին քաղա-քական շարժման մասին ոչինչ լուր չունէինք: մի քանի ամիս սրանից առաջ անդադար լսում էինք, այս ինչ տեղ այս լրագիր ար-գելեցին, այս ինչ տեղ այս ինչ մարդկերանց կալանաւորեցին և այլ սրա նման լուրեր: Այսօր հեռագիրը մեզ լուր բերեց, որ բոլոր յուզումները հեղինակին—Ջիօվանի Պասա-նանիին դատաստանական բարձրագոյն ա-տենը մահուան դատապարտեց:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագիրը հազարում է, որ ֆրանսիա-կան կառավարութիւնը համաձայնվեց անգլիա-կան կառավարութեան հետ միասին, պահան-ջել խեղդիկ, որ միաստութեան կազմակեր-պութեան մէջ անպատճառ մտնի և Նուբար-փաշան: Երեկ այնպիսի համաձայնութիւն կը կայանայ երկու կողմերի մէջ, որ Նուբար-փա-շան (որ հայ է և քրիստոնէայ) արտաքին գոր-ծերի մինիստր կը նշանակվի, և ոչ թէ մինիստր-նախագահ, որ պահեց այդ պաշտօնը մինչև զինուորական ապստամբութեան պատճեկը Կա-թիէյում: Ի միջի այլոց, Փարիզի «Le Soir» լրագրում տպված է Լօնդոնից ստացած մէկ մասնաւոր հեռագիր, որի մէջ յայտնվում է, որ խեղդիկ Նուբար-փաշան զինված անգլիական կա-ռավարութեան հարցմունքով թէ ինչ գրութիւն և ինչ ուժով կը արվի նրան անձնապէս, եթէ նա համաձայնվի հրաժարվել իր իրաւունքնե-րից յօգուտ իր անդամիկ որդի իշխան Տէֆվի-կի: Երեկ մի և նոյն ծանուցումը խեղդիկ տուեց և ֆրանսիական կառավարութեան: Այժմ ա-ռաջ ունենալով բոլոր այս բանապնդութիւնները եզրագծային հետ, զարմանալի չէ եթէ ֆրանսիա-կան կառավարութիւնը հարկաւոր համարեց զօ-րեղացնել իր նաւատորմը Միջերկրական ծովում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 27 փետրվարի: Այսօր աֆգանական նոր դեսպանը կը ներկայանայ Կայսրին: Լօրիս-Մեքլեով փետրվարի 26-ին հեռագրում է, որ մասնաժողովը, Զուգնօվս-կու օգնութեամբ, Յարիցինից սկսած մինչև Իուբովկա գիւղերը նայեց, և այդ գիւղերի գրեթէ բոլոր ձկների վաճառանոցներն էլ լաւ գրութեան մէջ գտաւ: Պրիշիբնիկի գիւղե-րում ամսին 25-ին այրեցին 4 վարակած տներ:

ԼՕՆԴՈՆ, 27 փետրվարի (11 մարտի): Ջէյալաբադից հեռագրում են, որ մայր Կա-վանիար ուղարկեց Կարուլ անգլիական գոր-ծակատարին, որպէս զի այս վերջինը առա-ջարկի Եակուբ-խանին խօսել բանադնացու-թիւնների մասին: Շուվալով, ժամանակաւո-րապէս թողնելով պաշտօնը, մի քանի օրով Ս. Պետերբուրգ գնաց:

ՏԱԾԿԵՆՏ, 27 փետրվարի (11 մարտի): Աֆգանական դեսպանները հրաժարական առան Կառֆանից, որը Պետերբուրգից ստա-ցած ազդարարութեան համաձայն, Եակուբ-խանի խնդրներին ոչինչ որոշ պատասխան չը տուեց: Նիւ-Սիլի մահը ըստ երևութիւն պաղեցրեց Ռուսաստանի և Աֆգանիստանի բոլոր բարեկամական կապերը:

Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 27 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսեր առաջին շրջանի արժէ 96⁵/₈ ռ., երկրորդ 96¹/₈ ռ., երրորդ 95⁵/₈ ռ., չորրորդ 95³/₈ ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 236 ռ. 50 կ., երկրորդ 235 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսեր արժէ 93 ռ. 25 կ., երկրորդ 93¹/₄ ռ., Թիֆլիսի կալուածա-կան բանկի գրաւական թերթը արժէ 93 ռ. 50 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ 23,50 պենս, ռուսաց 100 րուբլ Փարիզի վրա արժէ 248 ֆրանկ, Գերմանիայի վրա արժէ 200 մարկ, 75 պֆ.: Տրամադրութիւնը ամուր է:

ՎԵՏԼԵԱՆԱՍ, 26 փետրվարի (10 մարտի): «Голосъ» լրագրին հեռագրում են, որ փե-տրվարի 26-ին Վէտլանիայի ամբողջ ազգա-րնակութեան միօրական ժողովադարութիւն կատարվեց: Կրասովսկու փոխարէն նշանակ-վեցաւ Ռէյտլիսկե: Ամին 26-ին հասան Վէտլանիա ֆրանսիական պատգամաւորները Լալման և Բուբէր. նոյն օրը տեղ հասան նոյնպէս Դանիայի բժիշկ Յալեբը և Ֆին-լանդիայի դոկտոր Սպէյա: «Новое Время» լրագիրը ամին 27-ին հաղորդում է Ադրիա-նօպօլեց թէ այնտեղից ռուսների ետեւից 20,000 մարդ գաղթեցին:

ՏԱԾԿԵՆՏ, 27 փետրվարի: Եակուբ-խանը Աֆգանիստանի գահը ժառանգեց: Հին Կու-րումում տեղացի Գէլջի կոչուած ցեղը բողո-րովին ջարդեց երկու անգլիական բատալիօն-ներին: Անգլիացիք կորցնելով բոլոր պատե-րազմական մթերքը, սկսեցին փախչել: Բնա-կիչները յարձակվեցան Ջէյալաբադի մօտ գը-տնվող Լազմա կոչված ամրոցի վրա, քան-դեցին, կողպեցեցին ամրոցը և անգլիական զօրքի հրամանատարին կապած ձեռքերով ուղարկեցին Կարուլ Եակուբ-խանի մօտ: Անգլիացիք սաստիկ վհատութեան մէջ են:

Ս. ՊԵՏԵՐՈՒԹՅՈՒՆ, 28 փետրվարի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Խարի-վում նահանգապետ է նշանակվել Գրոզնոյի նահանգապետ, գեներալ Փոն-Վալուսկի: «Русский Инвалидъ» լրագիրը հաղորդում է, որ իշխան Բարեատինսկու մահուան պատ-ճառով, բոլոր զօրքերի մէջ երեք օրվայ սուգ է նշանակված, իսկ Կարաբիքինի զըն-դում և երկրորդ Ստրելկովի բատալիօնում այդ սուգը կը տեւ 9 օր: Երեկ անգլիական նոր դեսպանը ներկայացաւ Կայսրին:

Խմբագիր — Հրատար. ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

1879

Խմբագիր—Տրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔԱՐԵՈՒԿ „ԲՈՒՄԵՍԵՆՆ“ ԵՎՏԻ

ԳԻՒՆ ՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԸՆ—ՇԼԵՍԻՆԳ

Փախույթ է Շեփոնհեյտի ՊՎԻԼԻԺՆՈՒՄ ՄԵՏ՝ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂԶ ՎԱԳՐՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՈՊ., ԻՍԿ ՓՈԳՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵ ՔԱՂԱԳԻՔ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՈՊԵԿՈՎ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ԷԻ

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Պարտեզն ու զպրորը զանվում են Վերլուսինովսիկի փողոցում Իշխան Ն. Ամատունու տանը: Դճ-11:

ՌՈՒՍԱՑ ԹԵՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻՑ նոր ստաց-
վեցան 10000 ֆունտ ֆուլադի և կեա-
լաթի թէյ սեփական փորձանկութեան 1
ր. 20 Կ. մինչև 8 ր. ֆուսուր: Ֆուլադի թէյի
համար ինձանից գնողներից շատերը նամակ-
ներով շնորհակալութիւն յայտնեցին, յոյս ու-
նեն՝ ապագայում գնողներից նոյնպէս ստա-
նալ: Ծախսում է մեծ քանակութեամբ և
փոքր: Փաստայի ծախսը ինձ վրա աւելում
եմ: Հասցեն Միլբայէլեան կամուրջ: «Кавказъ»-ի
կամաւորատան տակ: Վաճառական Ա. Պոլո-
սովսկին:

5-10

ԵՐԵՎԱՆԻՄ Աստաֆինկայա փողոցի վրա-
քաղաքի կենտրոնում ձեռնտու զնով՝ ՄԱՆ-
ՎՈՒՄ Է քարից և կրից շինած մի ՏՈՒՆ:
Տան մէջ կան տաս խԱՆՈՒԹՆԵՐ ամբարա-
նոցներով, սառուցատուն և երեսուն և չորս
ՍՆՆԱԿ ծառաների բնակարաններով և պա-
ռաքանքով տան ամբողջ երկայնութեամբ:

ՔԱՅԻՐ ԺԵՃՈՒԹՅԱՆԸ 2000 Քառակուսի սառեկ է, բակի մէջ ԱՌԱՋԱՆ կայ: Տան դիմացի կողմի երկամետրոսիւնը 63 արշին է, իսկ լԱՅՆՈՒԹՅԱՆԸ նոյն կողմից 24 արշին: ԱՄ բոլոր տունը տարեկան 5600 ռ. եկամուտ է տալիս: Յիշեալ տունը ԳՆԵԼ ցանկացողները կարող են դիմել Երևան տան տէր Արտեմ Պապրիգովին: Նոյն տան մէջ ցանկանում են յանձնել մէկ ուրիշ ՔԱՅՐԱՆԵՆԵՆԵՐԻ ԽԱՆՈՒԹ, պիտանի բոլոր պարագաներով ԱՐՄՏԵՄ ՊԱՊԻԿԵԱՆՅ:

ԿՐՈՂԻ ՌԵՍՈՐՏԱՐԱՆԸ ԳԻՆԵՐՈԹԻԿ ԵՒ
ԵՐԹԵՆԵԿ ԿԱՍՏՐԱՍՏՈՒՄԷ ԵՐԵՎԱՆԵՐԻՆ ՄԻՋ-
ՆԱԿԱՐԳ ԲՈՂՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՓՈԽՐ
ԴԱՍԱԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ՃԱՇԽՑ ՑՆ-
ՏՈՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՆ ԼԻՆՈՒՄ: Ֆրանս-
սիերէն և ղերմաներէն լեզուների գործնա-
կան և տէօրեակական դասեր են տրվում:
Ուսումնարանը զանաւում է Վօրոնցովսկայա
նարբերժնայա փողոցի վրա, Բեյեանեվե նախ-
կին տանը, № 19.

2-3

U. 97

Գրառիչի Ալեքսիանտոս Թարուծիւնեան, որը մականունը Սարընեան Արփացիի, Կ. Պոլսի Բերդի թաղը ծնած, 18—20 տարեկան, արհեստը դրաշտարուծիւն, ինքը բարձրա-
հասակ, երկու տարի է որ անգղիական վա-
ճառականի մը հետ ասկէ (Պոլսէն) ելած
շողեւնաւով Փոթիս երթալու, և անկէ ա-
լ Քիֆլիս անցնելու Նպատակու ճամբայ ելած
օրէն մինչև ցայսօր և ոչ մի լուր առնուած
է. հայրը մեռած է և մայրը և քոյր մը ու-
նի. ով որ ասեաճ է յիշեալ երիտասարդը
մարդասիրաբար ազգային լրագրաց իմաց տա-
լու շնորհի ընելը կարգադրուի:

4—21

«ՄԵԱԿԻ» ԽՄԲԱԳԻՐԱՏԱՆԸ Հարկաւոր է մէկ
ԼՐԱԳԻՐ ՏԱՐԱԾՈՂ: Պէտք է խմանայ
զրեւ և կարգաւ հայոց և ռուսաց լեզուներ
րով:

Въ редакцій „Мшакъ“ нуженъ
РАЗНОЩИКЪ, знающій читать и пи-
сать по-армянски и по-русски.

Բժիշկ Աւետիք Բարայան (Բարայեկ) ընդունում է հիւանդներին Ռիֆլիսի բժշկանոցում։ Հորեքշաբթի, հինգշաբթի և չաբաթ օրերը Ղլա-
խի և հոգեխան հիւանդո՞ղիներ բժշկելու
Բացի այդ բժիշկ Բարայան (Բարայեկ) հինգ-
շաբթի և չաբաթ օրերը առատեան 9—10
ժամը ընդունում է իր առաջ ներգրծ հիւան-
դո՞ղիներ ունեցող կամ էլ ներայկանութեամբ
բժշկելի աղքատ հիւանդներին։ Հայտնի է Սեր-
գեյեկայայ փողոց, տուն Բարայան օրոյի։

5-10

ՀԱՐՇԷԻ խանութում Գոլթիկնակի հրա-
պարակի վրա № 11 ծախվում են ամեն
տեսակ թէ պարտիզային և թէ ծաղիկներ/ը/
ՍԵՐՄԵՐ, որոնք նոր են ստացված և բո-
լորովին թարմ են:

3-10

Մարիամ Ստեփանեան, Եգոր և Իսա-
հակ Ղովզեանացիները զաւելով յայտ-
նում են առաջին ամուսնի ու վերջինե-
րի երբայր Ալէքսանդր Ղովզեանացի
ժառանգ մասին և խնդրում են բարեկա-
նութիւն և ծանօթներէն ներկայ գտնով յու-
րաբարաբարութեան հանդիսին: Հանդուրեա-
լին տառելով են Մովսէս սուրբ Գեորգ
կեկեղեցին թարթ 8-ին, Կոստանտնու 10
Յամին սեփական տանից, որ գտնվում է
Եփեսոսում, Սերգիեկսկի փողոցի վրա:

2-2

2-2

[illegible]